

ԳԻՏԱԿԱՆԱԿԱՆ

ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԽԱՂԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ՝

Սայաթնովագիտությունը ավելի քան իննսուներեք տարվա պատմություն ունի։ Սայաթ-Նովայի առաջին հրատարակիչը՝ Գ. Ախվերդյանը 1832 թվին լույս ընծայելով նրա 46 հայերեն խաղերը՝ ոչ միայն փրկել է այդ երգերը անհետ կորչելու վտանգից, այլ և սայաթնովագիտության հիմքն է դրել։ Նա բարեխիղճ ու խստապահանջ գիտնականին հատուկ ուշադրությամբ ուսումնասիրել է Սայաթ-Նովայի խաղերը, վերծանել շատ մանվածապատ ու անհասկանալի տողեր, ճիշտ կերպով բացատրել բազմաթիվ մտեր և օժտել իր աշխատությունը մի ընդարձակ ներածականով, որը մինչև այժմ էլ իր թարմությունը չի կորցրել և որոշ առումով անգերազանցելի է մնացել։ Գ. Ախվերդյանի կազմած ժողովածուի հրատարակությունից մոտ հիսուներեք տարի հետո, 1903 թվին, Գ. Ասատուրը «Ազգագրական հանգեռում» տպագրում է Սայաթ-Նովայի 8 նոր խաղեր, որոնք մինչև այդ անձանոթ էին մնացել գիտական աշխարհին։ Սակայն ինչպես Ախվերդյանի, նույնպես և Գ. Ասատուրի և ուրիշների կատարած աշխատանքը հատուկ ուշադրության չեն արժանանում երկար ժամանակ, եվ միայն մեր մեծանուն բանաստեղծ Հովհ. Թումանյանի շնորհիվ, 1913 թվից, Սայաթ-Նովայի անվան ու երկերի շուրջ բացատրական լայն աշխատանք է սկսվում։ Այդ օրերին է, որ սպառվում է Գ. Ախվերդյանի հրատարակած ժողովածուն, և Հայ Գրողների ընկերությունը հրատարակում է Սայաթ-Նովայի խաղերի նոր ժողովածուն։

Սայաթ-Նովայով սկսում են հետաքրքրվել նաև եղբայրական ժողովուրդները՝ վրացիներն ու ադրբեջանցիները։ 1918 թվին առանձին գրքով լույս են տեսնում անվանի աշուղի վրացերեն երգերը՝ բանաստեղծ Ի. Գրիշաչվիլու խմբագրությամբ։ Այնուհետև Սայաթ-Նովայի մասին ուսումնասիրություններ են գրում Գ. Լեոնիձեն, Մելիքսեթ-Բեկը և ուրիշները։

Սայաթնովագիտությունը, սովետական կարգերը մեր երկրում հաստատվելուց հետո, նոր էտապ է թևակոխում։ Համաժողովրդական հետաքրքրություն է ստեղծվում հայ մեծատաղանդ երգչի շուրջը։ Սայաթ-Նովայի երգերը այդ կարճ ժամանակաշրջանում լույս են տեսնում 6 անգամ (վրացերեն և ռուսերեն հրատարակությունների հետ), որոնցից և ոչ մեկն էլ այժմ չկա հրապարակի վրա։ Այդ փաստն ինքնուստինքյան խոսում է այն մեծ հետաքրքրության մասին, որ ցուցաբերում է մեր ժողովուրդը իր անմահ գուսանի հանդեպ։ Այդ բոլոր հրատարակությունների մեջ համեմատաբար ամենակատարյալը գրախոսվող ժողովածուն է, որի մեջ ընդգրկված են Սայաթ-Նովայի հայերեն խաղերը, վրացերեն և ադրբեջաներեն տաղերի մի սովոր մասի թարգմանությունները ու երեք լեզվով գրված մի շարք բանաստեղծություններ։ Վրացերենից թարգմանված են 25 տաղեր, որոն-

՝ Սայաթ-Նովա, Հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Հայպետհրատ., Երևան, 1945 թ.

ցից մի քանիսը այլ թարգմանություններով արդեն ծանոթ են հայ ընթերցողներին։ Ադրբեջաներենից թարգմանված են 52 տաղ, որոնք Սայաթ-Նովայի ադրբեջաներենով գրված խաղերի կեսն են միայն։ Այսպիսով, այս ժողովածուն համեմատաբար առաջին լրիվ հավաքածուն է, որը հրամցվում է մեր ընթերցասեր ազգասակչությանը։

Սայաթ-Նովայի երկերի այս ժողովածուի արժեքը չի սահմանափակվում միայն նրանով, որ նա համեմատաբար լրիվ է։ Ներհուն բանասեր Բ. Ախվերդյանից հետո շատ մարդիկ են գրադվել Սայաթ-Նովայի երկերի ուսումնասիրությանը, բայց՝ նրանցից և ոչ մեկը այնքան ջանք ու աշխատանք չի թափել մեր մեծանուն տաղերգուի երգերի անհասկանալի մնացած ու չվերծանված կողմերի բացատրության վրա, որքան այս ժողովածուն կազմողը՝ Մ. Հասրաթյանը, թեև նա առայժմ չի կարողացել բացահայտել Սայաթ-Նովայի բոլոր երկերի գաղտնիքը։ Սայաթ-Նովան մի անհասանելի գագաթ է եղել մեր աշուղների համար։ Նա անգերազանցելի բանաստեղծ է, ժամանակի գիտության ամենաբարձր մակարդակին կանգնած ստեղծագործող, մեծ արվեստագետ ու բնական ձիրքով օժտված մի սարդ, որի տաղերի յուրաքանչյուր տողը նուրբ ճաշակի կնիք է կրում։ Այդ չնախորդված գործերն ուսումնասիրողը միայն այն ժամանակ կարող էր ճիշտ արժեքավորել դրանք, երբ ըմբռներ նրանց իմաստը։ Իսկ դա հեշտ գործ չէր։ Նույնիսկ Գ. Ախվերդյանի համար շատ ու շատ հարցեր, Սայաթ-Նովայի տաղերի շատ տողեր, անբացատրելի են մնացել, մինչդեռ Մ. Հասրաթյանին հաջողվել է պարզել այդ հարցերից շատ շատերը և առավել պարզ ու հասկանալի դարձնել Սայաթ-Նովայի երգերը, ու զրանով իսկ ավելի ընդգծել մեր բանաստեղծի վարպետությունն ու հմտությունը։ Այդ աշխատանքի արդյունքը մենք տեսնում ենք ժողովածուի հենց առաջին տաղի մեջ։ Այդ տաղի վերջին տան տողն բառը բնագրում սխալմամբ գրված է դուղըն, իսկ հրատարակչները չեն ուղղել։ Մ. Հասրաթյանը ուղղում է այդ բառը և ցույց է տալիս նաև այդ տաղի նախավերջին տան բովանդակության մասին եղած առարկությունների անհիմն լինելը։

Երկրորդ խաղի (ԼԵ) վերջին տան երկրորդ տողի առաջին կեսը Բ. Ախվերդյանը չի վերծանել և բոլոր հրատարակությունների մեջ բաց է մնացել։ Ս. Հասրաթյանը ճիշտ կերպով վերծանում է բնագրում գրված նովափարձիկովաին բառաշարքը և կարդում է «Նովափար ծաղիկ ծովային» և ուղղում նույն տողի 2-րդ կեսում գրված ծովին բառը հովին բառով։ Նրա ուղղումը ու վերծանումը ոչ միայն պարզ ու հասկանալի են դարձնում այդ գեղեցիկ ոտանավորը, այլև միանգամայն ճիշտ են ու պատճառաբանված, բխում են Սայաթ-Նովայի երգերի ոգուց և մի ավելորդ անդամ ևս ընդդրում են այն սերտ կապը, որ կա Սայաթ-Նովայի երգերի և մեր միջնադարյան տաղերգուների ստեղծագործությունների մեջ։ Պարզվում է, որ Սայաթ-Նովան իր տաղերը հորինելիս՝ օգտագործել է մեր միջնադարյան տաղերգուների բանաստեղծական հնարներն ու պատկերները։ Նրա «Նովափար ծաղիկ ծովային, մանիշակ բաց արած հովին» հիշեցնում են Գրիգոր Նարեկացու տաղերից մեկի հետևյալ տողը.

— Ծավալանայր ծաղիկ ծովային....

Սայաթ-Նովան ստեղծել է այնպիսի գործեր, որոնք ուժեղ թելերով մեր անցյալի հարուստ կուլտուրայի հետ կապված լինելով հանդերձ, միանգա-

մայն ինքնատիպ են, սիրելի մեր ժողովրդին, որովհետև նրա ոգու և զգացմունքների անմիջական արտահայտություններն են:

Ութերորդ խաղի (հին հրատարակություններում Թ խաղ) 3-րդ տան երկրորդ տողի մի վանկը պակաս է. ժողովածուն կազմողը նկատի ունենալով, որ հեղինակը առաջին տողը սկսում է յար կոչական բառով՝ 2-րդ տողի սկզբում ավելացնում է նույն բառը՝ որը համապատասխանում է տեքստի ոգուն և լրացնում է տողի վանկերը: Այդ երդի նույն տան վերջին տողում մի վանկ ավելի է. այստեղ նույնպես ճիշտ է վարվում Մ. Հասրաթյանը, երբ ուղղում է ուրաղան բառը ուրղան ձևով:

Տասնվեցերորդ (Գ) խաղի մասին ժողովածուն կազմողը ծանոթության մեջ գրում է. «Գ. Ախվ. վերծանության մեջ խաղի 9-րդ տողում մի վանկ ավելի էր՝ «եկ, արի, սիրտ, մի կենա դուն մե դամադի»։ Ենթադրում էի, թե եկ, կամ ավելի շուտ դուն բառերից մեկն ու մեկը սխալմամբ մնացել է տողի մեջ, բայց ամբողջ երգն ուշադիր կալրդալուց, բովանդակությունը վերծանելուց հետո, հանդես է գալիս Գ. Ախվ. սխալն այդ տողում: Ստացվում է այնպես, որ երգիչը դիմում է իր սրտին, որպեսզի այն չմնա մեկ տրամադրությամբ (դամադի) — «մի կենա դուն մե դամադի», իսկ սա ամբողջությամբ հակասում է խաղի ոգուն: Մեզ համար կասկածից վեր է, որ բնագրում զրված է եղել «մնա դուն մե դամադի»: Մնա բառը վրացերեն զրված է եղել մինա (ը տառը չլինելու պատճառով): Դուցե մի ավելորդ կ տառ, կամ նման մի դիծ ևս, ընկած է եղել բառի մեջ, և Ախվերդյանը կարդացել է «մի լնա — մի կենա», որից աղավաղվել է ամբողջ երդի միտքը և տողում ավելացել է մեկ վանկ: Մենք այս սխալն ուղղեցինք» (էջ 159): Այդ ուղղումից հետո երդի բովանդակությունը միանգամայն պարզ ու հասկանալի է դառնում:

31-րդ խաղի (Ե) 14-րդ տողը Գ. Ախվերդյանի հրատարակած ժողովածուի մեջ հետևյալ ձևով է զրված.

«Տաս տարի է ման իմ գալիս Փաղիշահի շահիփի պես»:

Այդ ձևով հրատարակել են նաև մնացած բանասերները. Մ. Հասրաթյանը ուղղում է այդ բառը և գրում է շարիփ: Նրա ուղղումը արդարացվում է, որովհետև այդպիսով նախ՝ կանոնավորվում են երդի հանդերը, ապա՝ իմաստը հասկանալի դառնում:

Սայաթ-Նովայի տաղերի 1852 թվի (Գ. Ախվերդյանի) հրատարակություն մեջ ԽՆ խաղի չորրորդ տան առաջին տողը ունի նույնպիսի նախաբառեր, որոնք իրենց իմաստով չեն կապվում տեքստի մյուս տողերի իմաստի հետ: Այդ հանգամանքը ստիպում է Մ. Հասրաթյանին որոնումներ կատարել: Նա գտնում է, որ նախաբառ, որը նշանակում է «հյուսն» և նույնպիսի «մեծ վեզիր» բառերը, նույնպիսի աջար պարսկերեն դարձվածքն է՝ աննշան աղավաղումներով. այդ դարձվածքը նշանակում է փքքյալ, ծաղկած ու դալար, պերճ: Այդ բացատրությունը տալը լրիվ չափով հասկանալու հնարավորություն է տալիս:

Այսպես անվերջ կարելի է շարունակել Մ. Հասրաթյանի կարևոր ուղղումները, որոնք անգնահատելի ներդրումներ են սայաթնովագիտության մեջ:

Մ. Հասրաթյանը կատարում է մի շարք այլ ուղղումներ, որոնց մասին խոսում է ծանոթությունների մեջ, բայց չի մտցնում տեքստում: Այսպիսի խստապահանջությունն ու զգուշավորությունն անկասկած գովելի են:

սակայն այնպիսի ուղղումներ, որոնք կասկածանքի քիչ տեղիք են տալիս, պետք է մտնեն հրապարակված տեքստում (տես 7, 29 և այլ ծանոթություններ):

Տեքստային ուղղումներ կատարելուց բացի Ա. Հասրաթյանը վերծանում է Սայաթ-Նովայի մի շարք անհասկանալի տաղեր: Դրանցից որպես օրինակ կարելի է վերցնել 49-րդ (ԾԴ) և 51-րդ (ԾԴ) խաղերը, որոնք վերծանված չեն եղել, կամ վերծանվել են մեծ թերություններով:

Մըտա էշխի քուրեն խալիս դառնալու,
սիրաըս էլավ քե ու այիք, երկու բեն. (քաբար)
կամավ սովզեն մըտա դարդն բառնալու,
[էլ] հւմ բըռնիմ սե ու այիք երկու բեն: (սաբար)

Այստեղ, ինչպես նկատում է ընթերցողը փակագծերի մեջ վերցված բառերից, Սայաթ-Նովան հատուկ իմաստով է գործածել հայերեն այբուբենի համապատասխան տառերը. եթե լրիվ թարգմանենք քառյակը, հետևյալ տեսքը կստանա.

Սիրո քուրան մտա մաքրվելու (գտվելու).
բայց սիրտս այրվեց, դարձավ խորոված. (քաբար)
կամքով սիրո մեջ մտա դարդ շալակելու,
էլ հւմ մեղադրեմ, էլ ո՛ւմ բռնեմ պատճառ: (սաբար)

Ավելի դժվար է եղել 51-րդ (ԾԴ) խաղի վերծանությունը, որի համար էլ այդ խաղը անուշադրություն են մատնել սայաթնովագետները: Մ. Հասրաթյանը ցույց է տալիս այդ խաղի հույժ կարեորությունը, որովհետև, ինչպես հավաստում է նա, այդ երգը կարող է օգնել Սայաթ-Նովայի ծննդյան թվականի հետ կապված մի շարք առեղծվածներ պարզելու: Ասայաթնովագետներից ոմանք այդ խաղը համարել են սովորական թեջնիս, որը «այնքան էլ հաջող չի, որովհետև ուրիշ աշուղներ ավելի լավ թեջնիսներ ունեն»: Մ. Հասրաթյանը իրավացիորեն հերքում է այս կարծիքը և ցույց տալիս Սայաթ-Նովայի վարպետությունը թեջնիսներ գրելու մեջ: Այդ խաղը որոշ ճշտումների ենթարկվելուց հետո հետևյալ ձևն է ստացել.

Այբըբիմըն կարթացիլ իմ դասեդաս, (դասե — դաս)
Հասա ու է, հասա ջե (?). հասա սե, (հասա սե)
Անգրըծակի մի ձեն էկավ դասեդաս,
Անգաճ կալա, չիմացա ինչ հասասե: (հասաս է)
Հազար տարին մարթու աչկին թաքավուր. (թաք ավուր)
Քանի տընանդ, քանի հարուստ թաքավուր (թա գա վուր)
Զի հարցնի ախկատ, հարուստ, թաքավուր՝
Մահը վուր կա, առանց կաշառք հասասե: (հասաս է)
Բառնացավ, թթվեցավ կինքըս ծովացավ. (զովացավ)
Ախ քաշիլեն սիրտըս ընգավ ծովացավ (ծովա ցավ)
Գաթելով, կաթելով դարդս ծովացավ,
Մի մարթ չկա, վուր ինձ խրատ հասասե: (աս առ է)

Հազար տարի մարթու աչքին քարասուն, (քարա սուն)
 Ո՞վ է մնացի աշխարհումս քարասուն, (քար ասուն)
 Սայաթ-Նովա տարիտ էլավ քարասուն, (քառասուն)
 Դուն մահիդ հիդ, մահը քիդ հիդ հասասէ, (հաս հաս է)

Այս տաղը փիլիսոփայական խոր մտքեր պարունակող բարձրարվեստ մի ստեղծագործություն է, որի մեջ Սայաթ-Նովան խոսում է նաև իր տարիքի և ծննդյան թվականի մասին։ Այդ խաղի մասին Մ. Հասրաթյանը դրում է. «Զուով ու բովանդակությամբ հետաքրքիր այս թեֆնիսի ք տողն անշուշտ աղավաղված է Օհանի կողմից, որովհետև նա չի իմացել և չի կռահել, որ այս տողում թաքնված է խաղը գրելու տարեթիվը։ Մեզ համար այլևս կասկածի տեղիք չի մնում, որ այս խաղը բնագրում եղել է հետևյալ ձևով՝ «հասա Ռա է հասա չա ծա, հասա Սե», այսինքն՝ Ռ2Մէ (=1757) թվականին, և որովհետև նախավերջին տողում ասում է «Սայաթ-Նովա տարիտ էլավ քարասուն», ուստի պետք է ընդունել, որ մեր երգիչը ծնվել է 1717 թվականին» (էջ 166)։ Այս ուղղումը, սակայն, Մ. Հասրաթյանը տպագրված տեքստում չի անցկացրել, թեև առանց վերապահության նա կարող էր այդ ուղղումը կատարել, մանավանդ որ այդ տողի մի վանկը պակաս է և դրանով կամքողացնենք ամբողջ տողը։

Սայաթ-Նովայի այս նոր ժողովածուի հեղինակ Մ. Հասրաթյանի կատարած աշխատանքը այնքան մեծ ու բազմապիսի է, որ դժվար է միայն մի հոդվածով ընդգրկել։ Բավական է ասել, որ նա կազմել է Սայաթ-Նովայի գործածած անհասկանալի բառերի անհամեմատաբար լրիվ բառարանը՝ ավելի քան հազար երկուհարյուր բառից, որի 50%-ից ավելին բացատրել է Հասրաթյանը։ Էլ չենք խոսում այն բառերի մասին, որոնք մտել են Սայաթ-Նովայի մինչև այժմ լույս տեսած ժողովածուների բառարաններում, բայց սխալ մեկնաբանությամբ։ Մ. Հասրաթյանը ճշտել ու նոր պարզարանում է տվել դրանց, կամ նշել շատ բառերի նոր առումներ, որոնք ավելի համապատասխան են տեքստի իմաստին։

Մի քանի խոսք վրացերեն և ադրբեջաներեն տաղերի թարգմանության մասին. այդ առթիվ Մ. Հասրաթյանը պրում է. «Շատերը իրավամբ հարց կտան, թե ինչով է արդարացվում վրացերեն և ադրբեջաներեն երգերը թիֆլիսահայ բարբառով թարգմանելը և հենց այս ժողովածուի մեջ հրատարակելը։ Ապա այդ հարցը կանխելու համար, ջարունակում է. «...երբ ժողովրդական լեզվի մոտ գրականով կատարված մեր թարգմանությունները երկու-երեք անգամ քննության դրվեցին հատուկ հրավիրված նիստերում, անդամ հրապարակվեցին նմուշներ, բացառությամբ մի քանի հոգու, մեծ մասամբ դժգոհ մնացին այդ աշխատանքից։ Ընդհանուր տրամադրությունն այն էր, որ Սայաթ-Նովայի անունով լույս տեսնող ամեն մի գործ պետք է լսել հեղինակի լեզվով։ Մի քանի տող հետո եզրափակում է. «Իսկապես որ Սայաթ-Նովան մի հետաքրքիր բացառություն է, և գերազանցորեն այդ պատճառով էլ մեր կամքից անկախ, բացառիկ, նույնիսկ տարօրինակ ձևով կատարվեց մյուս լեզուներով պրված նրա երկերի թարգմանության առաջին փորձը» (տես՝ առաջաբանը)։

Սակայն որքան էլ պատճառաբանված լինի ընկ. Հասրաթյանի կարծիքը, որքան էլ ճիշտ լինեն Սայաթ-Նովայի վրացերեն և ադրբեջաներեն

երգերի թարգմանութեան հարցը քննած հանձնաժողովները, այնուամենայնիվ չէր կարելի այդ երգերը թարգմանել ժողովրդական հոծ զանգվածներին անհասկանալի լեզվով, ինչքան էլ այդ լեզուն հարազատ հնչեր հայ ականջին ե հարուստ լիներ: Այժմ մեր առաջ մի հրաւրաւ հարց է դրված՝ անցյալի կուլտուրական ժառանգութիւնը ամեն կերպ մատչելի դարձնել մեր ժողովրդի լայն զանգվածներին: Ընկ. Մ. Հասրաթյանի կատարած աշխատանքը Սայաթ-Նովայի հայերեն տաղերի վերծանութեան և ուղղումների մասին՝ հենց այդ նպատակն էլ հետապնդում է, մինչդեռ նրա թարգմանութիւնները, որքան էլ գեղեցիկ լինեն, նպատակին չեն հասնում:

Կարծում ենք, որ Սայաթ-Նովայի վրացերեն և ադրբեյջաներեն տաղերը ալիքի շուտ նպատակին կհասնեն, եթե թարգմանվեն դրական հայերենով: Կարծում ենք նաև, որ ընդհանրապես պետք է մեղմացնել Սայաթ-Նովայի բոլոր խաղերի բարբառայնութիւնը:

Սակայն որքան էլ մենք չհամաձայնվենք ընկ. Մ. Հասրաթյանի հեա, չենք կարող չնշել նրա աշխատանքը հենց թարգմանութիւնների բնագավառում: Նրա թարգմանութիւնները այնքան հաջող են և այնքան գեղեցիկ, որ ընթերցողը չի կարող չհիանալ դրանց արվեստով:

Ի վերջո չենք կարող լռութեան մատնել գրքում թույլ արված մի վրիպում: Գրքի բովանդակութեան մեջ նշված է Վրնձ ու իմ սիրեկան յարին՝ աաղը և ծանոթագրութիւններում: Բացատրութիւններ տրված այդ երգի մասին, մինչդեռ ցույց արված էջում այդ երգը չկա: Դժվար է կարծել, թե դա ժողովածուն կազմողի կամ խմբագրողի անփութութեան արդյունքն է:

Ս. ՂԱԶԱՐՅԱՆ

